

ՕՄԱՐ ԽԱՅԵՆԱՄԻ ՔԱՌԵԱՆԿՆԵՐԻ

ՎԵՐՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ասեմք ուղիղ է վարդապետը, ապա՛.
Եւ կեանքի գիրքը կարդացիր, ապա՛.
Ապրեցիր հարկու երջանիկ տարի.
Մէկ հարեւրով էլ հպարտացիր, ապա՛:

Մարդս արարչութեան փառք ու պսակն է.
Իմաստի Աշխի ցանցատեսակն է.
Մատանու պէս է շրջանն աշխարհի.
Եւ անշուշտ մարդը ոսկեհիւս ակն է:

Երէկ բերուտի խանութն եմ ճարում,
Մտնում՝ տեսնում եմ կուժեր լուռ, ճառում.
Եւ մէկը խօսեց կժերի կաճառում.
« Ո՛ր է կուժ շինում, առնում, վաճառում »:

Տւիր սիրածարծ այս լուսին Դիւթը. —
Յակնիթ — ամբարից է ներա նիւթը. —
Բայց հրամայում ես ներան չընայե՛լ.
Այս է. թէքիւր բայց չըվայթե՛ս հիւթը:

Բրուտի խանութում ես մէկ օր կայի,
Վարպետը կանգնած էր մօտն իւր կահի,
Կուժերի համար կանթ, խուփ էր շինում,
Մուրիկի ուժից, զանկից արգայի:

Ինձ տուր քերթածներ, շիջ կարմիր գինի,
Կեանքըս պահելու կէս հաց բաւ կլինի,
'Ի եթէ դու մօտս ես, այդ՝ անապատին
Իշխանի շուքից չփեղ կը շինի:

Աշխարհում դէ՛ս վ անմեղ է, ասա՛,
Ի՞նչ արեց նա, որ անշիջ է, ասա՛,
Վատիս փոխարէն դու վնաս ես տալիս,
Մեր տարբերոյթը ճիւղ տեղ է, ասա՛:

Հոգիս ըսկզբում անդր — երկինք փնտռում՝
Պնայկիտ, վրձին, դրախտ, Դբժոխք էր խնդրում.
Իմաստուն վարպետն ապա ինձ ասեց.
« Դերանք թո՛ մէջ ես, ինքըդ ես ընտրում »:

Այս կուժն էլ ինձ պէս լացաւ ու սիրեց,
Կեանքը գեղունու վարսին նւիրեց.
Նըբա վզին թո տեսած սև կանթը
Ձեռքն է, որ նարի ծոծրակին տիրեց:

Սէրն եթէ ցաւ է՝ կամօն է տէրուհի.
Մարդըս ծաղրելու մի՛թէ դեր ունի.
Աստուած սահմանեց բարին ու չարը.
Էլ վերջին օրում ի՞նչ դատեր ունի:

Կեանք կար երբ դու, ես դեռ չէինք շնչում.
Աստղերն էլ իմաստ էին չընշում.
Ըզգո՛յ, հանդարտ սոթ դիր հողի վրայ,
Այդտեղ Միգրյի Աճիւնն է նշում:

Որտեղ հանդիպես վարդի, կակաշի,
Այդ ծիւ — արիւնն է մի իշխան քաջի,
Երկրից բողբոջող ամեն մանիակ
Այտի խալն է այդ Սիրակարկաջի:

Մհհհհն ու մզկիթ աղօթքի տուն են,
Կոշակ, մեղեդի նոյն իմաստն ունեն.
Մէհրաբ ու տաճար, վարդարան ու խաչ
Ապաշխարանքի տարբեր անուն են:

Բա՛ւ արին թափեց անգութ Եթերը.
Բա՛ւ ծաղիկ ծլեց, թափեց թերթերը,
Մի՛ խաբւիր, տըղաս, թէ առայգանձն ես,
Բա՛ւ կոկոն խամրեց, չբացած դեռ թերը:

Ես չեմ հեռանալ թո դրուան չէմքից,
Ձեմ ըզգուշանալ թո սպանող դէմքից,
Եթէ հողին իսկ հաւասար անես,
Գո՛ ուղին կ'երթամ, միշտ քեզ կ'լինեմ կից:

Բժազրից թարգմանեց

« ԱՄԱՐԱՆԹ »

ՎԱՂԱՐԵԱՍ ԳԱՆՈՒՍՅԱՆ

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՇԱԿԸ

Դրօշակները Հայաստանում միմիայն
կարմիր քաթանը չէ, վերեւի մասում Շ.
Շ. Շ. Շ. տառերով, այլ նրա վրայ կան
և երկու Մասիսները, որոնց միջից ծագում
է արեգակը:

Դա Հայաստանի պաշտօնական գերբն
է միևնոյն ժամանակ, ընդունված բոլոր
հիմնարկութիւններում: (Ժող. Ձայնը Թ.
1766 «Ձորա ամիս Խ. Հայաստանում»):